№ 279 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18 1902 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18 № 279

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(31-Դ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՑ **1903** ԹՒԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն եւ 8 ամսվանը՝ 8 ռ., եօթ եւ վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն), իսկ ԲԱԳԻՒՈՒՄ—Ն. Դաւթեանի մօտ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի մոռացէք նրանց.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց ներկայացումները. Նամակ Մոսկվայից. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վէնէցուէլայի խնդիրը. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Դօրպատի համալսարանը.

ՄԻ ՄՈՌԱՑԷՔ ՆՐԱՆՑ

Իւրաքանչիւր տարի մենք յիշեցրել ենք մեր հասարակութեանը նրա մի պարտաւորութեան մասին. նոյնը անում ենք այսօր։ Մենք խօսում ենք այն նպաստի մասին, որին կարօտով եւ անհամբերութեամբ սպասում են տնանկներ, աղքատներ եւ չքաւորներ առաջիկայ տօներին։

Մօտեցել են Նոր-տարվայ, Ծննդեան եւ Մկրտութեան տօները։ Ունեւորները պատրաստվում են ուրախանալու, միմեանց նուէրներ անելու եւ զուարճանալու։ Տանք մեր ունեցածից եւ մի փոքրիկ բաժին այն խեղճերին, որոնց ամբողջ կեանքը անցնում է զրկանքների մէջ եւ որոնց տօնն էլ կատարվում է չափազանց համեստ եւ հասարակ, եւ այն էլ այնքան հասարակ, որ այդ տօնը սահմանակից է նոյն թշուառ օրերին, որի մէջ նրանք ապրում են բոլոր ժամանակ։

Օգնենք խեղճերին, որպէս զի ուրախակից դարձրած լինենք մեզ հետ մեր մերձաւորներին, որպէս զի մեր զուարճութիւնների եւ տօնակատարութիւնների բաղդէներին մեզ չը տանջէ այն միտքը, որ մենք փորձ չարինք ուրիշներին էլ ուրախութիւն պատճառելու։ Օգնենք, որպէս զի տօները չը դառնան տօներ միայն արտօնեալների եւ կուշտերի համար, այլ լինեն հանրային եւ դիւրութիւն պատճառեն թշուառներին գէթ հանդիսաւոր օրերում, երբ մանաւանդ աւելի ծանր եւ սրտամաշ է լինում դասակարգերի տարբերութիւնը։

Թող բարեսրտութիւնը եւ գթութիւնը զարթնեն իրանց ոյժով։ Օգնեցէք ձեր մերձաւոր թշուառներին. ուղարկեցէք նըպաստներ բարեգործական հիմնարկութիւններին, որոնց դիմում են ամէն տեղից կարօտեալները։

Այն գումարները, որոնք մեզ կուղարկվեն, մենք ուրախութեամբ յանձն կառնենք տալու բարեգործական հաստատութիւններին կամ բաժանելու այն չքաւորներին, որոնք նախկին տարիների նման կը դիմեն խմբագրութեան։

Մենք հաւատացած ենք, որ մեր հասարակութիւնը չի մոռանայ իր թշուառներին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄՆԵՐԸ

—

Հայոց դրամատիկական ընկերութեան խմբի ռեժիսեօր և տաղանդաւոր դերասան Յ. Աբէլեան իր բենեֆիսին, որ կայացաւ երկուշաբթի, դեկտեմբերի 16-ին, ընտրել էր Զուդերմանի «Սոդոմի կործանումը» դրամատ։ Այս անգամ բացի այն, որ դերասանական խմբի բոլոր անդամները մասնակցում էին ներկայացման, իր բարեհաճ մասնակցութիւնն էր տուել և տիկին Սպէնդիարեան, և դրանով ներկայացումը աւելի ևս հետաքրքրութիւն էր գրգռել հասարակութեան մէջ։

Թատրօնը կատարելապէս լի էր և այդ հանդիսաւորները, որպէս զի մեր զուարճութիւնների և տօնակատարութիւնների բաղդէներին մեզ չը տանջէ այն միտքը, որ մենք փորձ չարինք ուրիշներին էլ ուրախութիւն պատճառելու։ Օգնենք, որպէս զի տօները չը դառնան տօներ միայն արտօնեալների և կուշտերի համար, այլ լինեն հանրային և դիւրութիւն պատճառեն թշուառներին գէթ հանդիսաւոր օրերում, երբ մանաւանդ աւելի ծանր և սրտամաշ է լինում դասակարգերի տարբերութիւնը։

Թող բարեսրտութիւնը և գթութիւնը զարթնեն իրանց ոյժով։ Օգնեցէք ձեր մերձաւոր թշուառներին. ուղարկեցէք նըպաստներ բարեգործական հիմնարկութիւններին, որոնց դիմում են ամէն տեղից կարօտեալները։

Այն գումարները, որոնք մեզ կուղարկվեն, մենք ուրախութեամբ յանձն կառնենք տալու բարեգործական հաստատութիւններին կամ բաժանելու այն չքաւորներին, որոնք նախկին տարիների նման կը դիմեն խմբագրութեան։

Մենք հաւատացած ենք, որ մեր հասարակութիւնը չի մոռանայ իր թշուառներին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՕՐՊԱՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

—

Դեկտեմբերի 12-ին, ինչպէս յայտնի է, Դօրպատի (այժմ Իւրիեվ) համալսարանը տօնեց իր գոյութեան հարիւրամեայ յօբելեանը։

Այս առիթով թող աւելորդ չը համարվի մի քանի տեղեկութիւններ տալ այդ բարձրագոյն կրթարանի մասին, որ այնքան մեծ նշանակութիւն է ունեցել և մեզ, հայերիս համար։

1625 թուականին Դօրպատ քաղաքը չվեդացիներից 8 օր պաշարվելուց յետոյ յանձնվում է Գուստավ Ադոլֆ մարդասէր թագաւորին։ Դօրպատի համար սկսվում է մի նոր շրջան. նա սկսում է, հանդէական քաղաք լինելուց յետոյ, նորից յայտնի դեր խաղալ Լիֆլանդիայում, նա դառնում է լուսաւորութեան, արդարադատութեան կենտրոն։ Գուստավ Ադոլֆի ուսուցիչ ազատատէր (Freiherr) Iohann Skytte, մի բարձր լուսաւորված անձնաւորութիւն, նշանակվում է այստեղ կառավարչապետ։ Արդէն 1630 թուականին, հոկտեմբեր ամսի 13-ին, մեծ հանդիսով բացում է նա այստեղ տղայոց գիմնազիա։ Նրա մէջ վաղուց էր միտք ծագել հիմնել այստեղ նաև մի բարձրագոյն ուսումնարան, որպէս զի միջոց տայ ամբողջ երեք նահանգների (Էստլանդիա, Լիֆլանդիա ու Կուրլանդիա) ազնուականութեան որդիներին շարունակել կրթութիւնը հայրենիքում. փոքր չէր նաև չվեդացի ազնուականների թիւը, որոնք ստիպված էին նոյն նպատակով դիմել Ուպսալայի համալսարանը։ Կասկած չը կայ, որ մի այսպիսի բարի միտք մեծ համակրութիւն և պատրաստութիւն գտաւ տեղիս ազնուականների մէջ։ Կազմվեց մի մասնաժողով, որ կարճ ժամանակամիջոցում ներկայացնում է ապագայ համալսարանի ծրագիրը։

Գնդակների անձրևի տակ, կռիւ դաշտում, ստորագրում է Գուստավ Ադոլֆը Նիւրնբերգ քաղաքի մօտ, յուլիսի ամսի 30-ին, այս ծրագիրը, որի համաձայն գիմնազիան վերափոխվում է համալսարանի, թողնելով մի և նոյն ժամանակ համալսարանին կից 4-դասեան գիմնազիա։

1632 թ. հոկտեմբերի 15-ին օրհնվում է առաջին համալսարանը Դօրպատում, որը նոյն բազմաչարաչար ճակատագիրն է ունենում, ինչպէս և Դօրպատ քաղաքը։ Այս առաջին համալսարանը բաղկացած էր 4 ճիւղից, ունէր ընդամենը 17 պրոֆէսօրներ՝ I աստուածաբանական—4 պրոֆէսօրով, II իրաւաբանական—3 պրոֆէս. III բժշկական—2 պրոֆէս. ու IV փիլիսոփայականը, որը զանազան բաժանմունքներից էր բաղկացած,—1) մաթեմատիկա—3 պրոֆէսօրով, 2) արեւելեան լեզուներ—1 պրոֆէսօրով 3) պատմութիւն—1 պրոֆէսօրով 4) պերճախօսութիւն—1 պրոֆէսօրով 5) բանաստեղծութիւն—1 պրոֆէսօրով ու վերջապէս լոգիկա—1 պրոֆէսօրով։ Համալսարանը ապահովելու համար Գուստավ Ադոլֆը նուիրել էր նրան կալուածներ, պրոֆէսօրներին նշանակված էր տարէնը 500 ռէյխստալէր (մօտաւորապէս 450 ռուբլի)։ Ի պատիւ Գուստավ Ադոլֆի համալսարանը կոչվում էր «Gustaviana»։ Ինքը, Գուստավ Ադոլֆը, չարժանացաւ իր հաստատած համալսարանը տեսնելու. նա, համալսարանի ծրագիրը ստորագրելուց յետոյ մի քանի ամիս չանցած, պատերազմի դաշտում իր մահը գտաւ, իսկ գահը բարձրացաւ նրա 6 տարեկան դուստր Խրիստինան։

Համալսարանում թէ պրոֆէսօրների ու թէ ուսանողների մեծ մասը չվեդացիք էին, մանաւանդ առաջինները, բայց սա ոչ մի նշանակութիւն չունէր, քանի որ դասախօսութիւնները լատիներէն լեզուով էին կարդացվում։ 1641 թուի նոյեմբեր ամսի 2-ին օրհնվում է համալսարանական շինութիւնը, որի առիթով թագուհի Խրիստինան ընծայում է համալսարանին մի գեղեցիկ գրադարան։—Այս թագուհին յայտնի է չվէդական պատմութեան մէջ իր չքեղամոլութեամբ. նա չհայլում էր իր հայրենիքի հարստութիւնները անհաշիւ. ամբողջ երկիրը քամվել, ուժասպառ էր դառել,—ինչ որ իր մանկական հասակում համալսարանի համար չինել էր, պիտի աւելի մեծ, կատարեալ հասակում քանդէր։ Նրան հարկաւոր էր փող, հարստութիւն, որ իր անվերջ կապրիզներին բաւականութիւն տար։ Ինչպէս երևում է, էլ ուրիշ աղբիւրներ չէին մնացել, նա վճռում է իր հօր համալսարանին ընծայած կալուածները համալսարանից յետ խլել ու ծախել. ոչ խընդիրքը, ոչ աղաչանքը չօգնեցին, նա մնաց անողոք։ Բայց չը նայած այս հանդամանքին, պրոֆէսօրները քաջ էին տալիս մի կերպ իրանց ու համալսարանի գոյութիւնը, այնպէս որ համալսարանը 1656 թ. իր 24 տարվայ գոյութիւնից յետոյ՝ իր պրոֆէսօրների մէջ հաշվում էր երկուսին, որոնք նոյն համալսարանում էին պատրաստվել պրոֆէսօրական պաշտօնին։ 24 տարվայ ընթացքում 1632—1656 հաշում էր ընդամենը 1016 ուսանողներ։

—

Զուր չանցան սակայն այս երեք նահանգի ազնուականութեան աշխատանքները. «աւելի լաւ է ուշ, քան ոչ երբէք», այս նշանաբանը ամուր բռնած աշխատում էր նա իր բարձրագոյն ուսումնարանը նորից վերականգնեցնելու։ Տաննեակ տարիներ էին անցնում, նա չէր վրհատում, նա ապրում էր հաւատքով, մեծ յոյսեր էր տածում։ Նա իր կարողացածի չափ պատրաստ էր և նիւթապէս օգնելու։ Եւ ահա դրեթէ ամբողջ հարիւր տարի էր անցել, որ համալսարանի կարևորութիւնը ոչ թէ միայն արձագանք գտաւ կայսր Պաւել I-ի մօտ, այլ և նա սկսեց մտածել, թէ ինչպիսի դրամական միջոցների պէտք է դիմել՝ չուտով նրան կազմակերպելու։ Նա յանձնեց այս նպատակով երեք նահանգների ազնուականութեան կազմել մի որոշ ծրագիր ապագայ համալսարանի համար, որը նա 1799 թուի մայիսի 4-ին հաստատեց և շնորհեց համալսարանին հարիւր կալուածք ու տարեկան սուբսիդիա 56,050 ռուբլի։ Բայց ինչ որ կայսր Պաւել I սկսել էր, նրա մահվան պատճառով, իրագործեց կայսր Ալէքսանդր I, որ ոչ թէ միայն հաստատեց Պաւել I-ի նուէրները, այլ և աւելացրեց նրանց վրա չվէդական Marien-Kirche կոչված եկեղեցու կալուածքը, համալսանանի այժմեան զարդը՝ «Domberg» ու միանուագ 25,000 ռուբլի համալսարանի շինութեան համար։ Արդէն 1802 թ. ապրիլի 21—22-ին, շնորհիւ կայսր Ալէքսանդր I-ի ջանքերի, տեղի ունեցաւ Դօրպատի համալսարանի հանդիսաւոր բացումը։

Մեծ յուզմունք էր տիրում Դօրպատում. չը գիտէին, թէ ինչպէս աւելի պատշաճ կը լինի մեծ կայսրին իրանց շնորհակալութիւնը յայտնել. կայսրը դարձել էր նրանց համար մի կատարելութիւն, նրանք աստուածացնում, պաշտում էին նրա սէրը դէպի լուսաւորութիւն ու մանաւորապէս դէպի Դօրպատ քաղաք։ Ազնուականներից մէկը, von Bock ազգանունով, բացում է իր ահագին տունը ձրիապէս համալսարանի համար 5 տարով։ Նոյն տարում (1802) մայիսի 1-ից սկսվում են դասախօսութիւնները, որոնք պատրաստական բնաւորութիւն կրելով, տևում են 2 ամիս։ Հաստատվում են համալսարանի արձակուրդները, տարվայ ընթացքում երկու ամիս,—յուլիս ու յունվար

նում ազատվելու իրան կաշկանդող կապերից, փրկվելու և անարատ կեանքի մէջ անձնատուր լինելու ստեղծագործութեան, և նա ընկճվում է այդ հոգեկան տանջանքների ծանրութեան տակ ու մեռնում։

Վիլլիի տիպը դժուար և խոր հոգեբանական տիպ է. նա մեծ բարդութիւններ է ներկայացնում, ուստի և մեծ պատրաստականութիւն, աշխատութիւն է պէտք նրան լաւ խաղալու համար։ Եւ Աբէլեան գործ էր դրել այդ աշխատութիւնը. նա լաւ էր պատրաստված և գեղեցիկ էլ տարաւ իր դերը ու յաղթեց դժուարութիւններին։ Անկասկած, Աբէլեան դեռ շատ և շատ կարող է զարգացնել իր տաղանդը և դեռ շատ ոպասելիք ունենք նրանից։

Տիկին Սպէնդիարեան, իր կերպարով, հագուստով, շարժուածներով, շատ լաւ ըմբռնել էր Ֆլերտ անող արիստոկրատուհու դերը. նա բաւական մեծ փայլ տուեց ներկայացման և ափսոս միայն, որ տիկինը խօսքերը արտասանում էր չափազանց ծանր և հատ հատ։ Տիկին Մայսուրեան Կիտտիի դերը կատարեց մեծ հմտութեամբ և ցոյց տուեց, որ նա ինքնակատարելագործութեան չուղի վրա շարունակ առաջադիմութիւն է գործում։ Մատիկոնեան, որ կատարում էր ուսուցչի Կրամէրի դերը, մեր կարծիքով, շատ էր վայրագ բնաւորութիւն ընծայում իր դերին. Կրամէրի պէս մաքուր, իդէական բնաւորութեամբ անձը չէր կարող և չը պէտք է կատաղութիւնը դազանութեան հասցնէ։ Շատ լաւ էր և տիկին Արաքսեան, որ սիրուն կերպով ներկայացրեց անմեղ, մաքուր Կլարայի դերը։

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՑԻՑ

Դեկտեմբերի 8-ին

Երէկ կայացաւ «Աշնուականների ժողովարանում» հայկական երեկոյթ։ Ռուս հասարակութիւնը միշտ սիրով է յաճախում հայ ուսանողների երեկոյթը, որտեղ նա ամենայն հաճութեամբ մտիկ է տալիս կօնցերտին և բաւարարութիւն ստանում։ Այս անգամ ժողովուրդ աւելի շատ էր, մօտ 2000 մարդ չտապել էր տեսնել այս երեկոյթը։

Ինչպէս ամեն տարի, դահլիճները զարդարված էին պարսկական գորգերով ու տեղ-տեղ դրված էին գեղեցիկ ու զարդարված վրաններ, որոնց մէջ հայ օրիորդները վաճառում էին կօնցերտի «պրոգրամմ»-ը։ Բեմի դեկորացիան նկարել էր պ. Սարեանը և ներկայացնում էր հայկական մի հին քաղաք։

Թէպէտև կօնցերտին մասնակցելու խօսք էին տուել մի շարք յայտնի արտիստներ, բայց ինչ-ինչ պատճառներից ստիպված՝ մասնակցում էին միայն երգչուհիներ՝ տ.տ. Տէրեան-Կօրգանովա, Պօղոսեակովա, պ.պ. Վլասով, Բեռնարդի և այլն։

Առանձին հետաքրքրութիւն պատճառեց կոյր—պիանիստ Ն. Տիգրանեանի դաշնակի վրա ածելը, պ. Սարաջևի ջութակ ածելը, և յետոյ երկուսի միասին ածելը, որ շատ լաւ տպաւորութիւն թողեց։

Շատ աջող էր կազմված և երգեցիկ խումբը, որ կառավարում էր ուսանող պ. Թամբեան, որ շատ լաւ ղեկավարեց. խումբը երգեց «Կիլիկիա», «Բամբ որոտան». վերջինիս մէջ ասէր երգեց ուսանող պ. Միքայէլեանը, որի գեղեցիկ ձայնը յայտնի է Մոսկվայի հայ հասարակութեանը։ Ժողովուրդը շատ լաւ ընդունեց հայ երգչուհի Տէրեան-Կօրգանովայի երգած «Երազ» և «Գիշեր» ռոմանսները և ցնծագին ծափահարեց։

Ամենից վերջը տեղի ունեցան ազգային պարեր արևելեան երաժշտութեան դաշնակցութեամբ։ Առանձին լաւ դուրս եկաւ «Եալլին» և «Շալախօն», ինչպէս և «Լեզգի-կա» և «Կինտօուրին», որտեղ պ.պ. Լիսինեան և Սունդուկեան ցոյց տուին իրանց շնորհքը։

Կօնցերտից յետոյ սկսվեցին եւրոպական պարերը, որոնք տևեցին մինչև ժամի 3-ը։ Կօնցերտի նիւթականի մասին կարող եմ յայտնել, որ տոմսակներից, ծրագիրներից, ծաղիկներից, բուֆէտից մուտք է եղել 5000 ռուբլուց աւելի, իսկ ծախս՝ մօտ 2000։ Այս տարի ուսանողները աշխատել են տնտեսութիւն անել և մասամբ հասել են իրանց նպատակին, որովհետև անցեալ տարիները ծախսը միշտ 3000 ռուբլի է եղել։ Երգեցիկ խմբի համար առաջ առանձին կառավարիչ էին վարձում, իսկ այս տարի իրանց միջից կարողացան գտնել այդ դերը կատարող. բեմի և այլ դեկորացիաները նկարել է պ. Սարեան նոյնպէս ձրի և այդպիսով մի կլորիկ գումար տնտեսել է, որ պատիւ է բերում ուսանողներին, այսինքն կարգադրիչ մասնախմբի անդամներին։ Երեկոյթը շատ ուրախ անցաւ։ Ուրախանում ենք և մենք, շնորհաւորելով ուսանողների երեկոյթի ինչպէս նիւթական, նոյնպէս և հետաքրքրութեան կողմից ունեցած աջողութիւնը։

Հանդիսական

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Դեկտեմբերի 10-ին

Զէնք կարծում, որ մի քաղաք այնքան յետ մնացած լինի քաղաքային ինքնավարութեան մէջ, ինչքան Շուշին։ Քաղաքային ինքնավարութիւնը, եթէ աչքի ընկնող մի միլիթարական բան չը տար քաղաքին՝ գոնէ իր ձեռքը յանձնած քաղաքը պէտք է պահպանէր այն դրութեան մէջ, ինչպէս առաջ էր։—Քաղաքային ինքնավարութիւնը չէ տալիս մեզ փողոցների մայթեր, թէկուզ ամենաբանուկ փողոցներում. եղածները պատկանում են ուրիշական թաղամասերին եւ ինչքան այն ժամանակ չինվել է՝ այն էլ մնում է։ Նոյն եւ աւելի վատթար դրութեան մէջ են նաեւ սալայատակները։ Քաղաքային ինքնավարութիւնը չէ տալիս մեզ գիշերային կարգին լապտերներ. եղածները նահապետական աղօտ, անլոյս լապտերներ են։ Քաղաքային ինքնավարութիւնը չէ մաքրել տալիս գոնէ քաղաքի յայտնի փողոցները, նոյնիսկ Թօփխանան, «Հախումենց քեահրիզի» առաջը, որտեղ այս բոպէին էլ սատկած կենդանիներով և աղբերով լիքն է. իսկ քաղաքի տուզերը ամեն օր ականատես են լինում ու... միայն քիթերը բռնած յետ քաշվում։ Քաղաքային վարչութիւնը չէ հսկում, որ սանիտարական բժիշկը, շուկայի վերակացուն, քաղաքային պահապանները եւ այլն իրանց պարտքը ճանաչեն ու կատարեն. բայց դրանք քաղաքի վրա մեծ փող են նստում։ Քաղաքային ինքնավարութիւնը Շուշիի անգործ հասարակութեան միակ կանգնելու տեղը՝ Թօփխանան, այդ փոքրիկ նեղ կենտրոնը, ծածկել է ու ծածկում է մի շարք զանազան չինութիւններով։—Մէջտեղն է Հախումենց քեահրիզը։ Նրանից ցած Թադէոսեանի չինել տուած ջրի շատրուանն է, որից ցրվում ջրերը լաւ ցեխերի կոյտեր են կազմում, եւ մէկը չը կայ, որ մտածէ աւելորդ ջրերը ստորերկրեայ անցքի մէջ անց կացնելու։ Ամբողջ Թօփխանայի տարածութիւնը շրջապատել են մայթերով, թէ ինչ նըպատակով, միանգամայն անհասկանալի է։ Այդ շրջապատ մայթերի չորս ծայրերից չինում են տախտակէ «բուտկաներ»՝ քաղաքի օգտին վարձով տալու համար. կարծես քաղաքի առեւտուրը այնքան թունդ է, որ փակված, պարապ խանութները բոլորն առեւտրականներով լցվել են։ Քաղաքային վարչութիւնը չէ կարողանում կատարել տալ եւ ոչ մի տակսա. փորձեցէք տակսայով գոնէ հաց ու միս առնել...

Զէնք հասկանում. կայ քաղաքագլուխ, կայ քաղաքային վարչութիւն, կան ձայնաւորներ։ Ի չարը գործ դնել մինչեւ այդ աստիճան 30 հազար բնակչութիւն ունեցող մի քաղաքի հաւատը, կարծում ենք, դատապարտելի է։

Կատարեցէք գոնէ այդ տարրական պարտականութիւնները։ Մի շլացնէք միամիտներին, եթէ այսօր մի ժամարեան մի հիւանդասենց է նուիրում քաղաքին, մի բարեգործական ընկերութիւն մի գրադարան-ընթերցարան է նուիրում, մի Առաքելեան բէալական դպրոցի չէնք՝ դրա պատիւը, փառքն ու պարծանքը ձերն է։

Քաղաքային բուլվարում չինվող ամարային կլուբը սատկի քամիներից քանդվել է և դետնի հետ հաւասարվել։ Ցայտնի բան է. թոյլ կերպով ամրացրած սիւների վրա կանգնեցնել ահագին ծանրութիւն, ծածկել չինութիւնը դեռ պատերը չը չինած՝ կարող է մի ամենաթեթև քամու, հաւասարակշռութեան մի անենչան շեղման զոհ լինել։ Ո՞ւմից պէտք է պահանջել դրա վնասը—կլուբի 7—8 հազար ռուբլին։—ահա հարց։

Թեմական դպրոցի տեսուչ Բենիկ վարդապետը մի հրաժարական զեկուցագիր է ներկայացրել առաջնորդին ու ինքը մեկնել Թիֆլիս։ Հաստատում են, որ զեկուցագիրը չէ վերաբերում դպրոցի վարչութեան, այլ մի շարք հայհոյանք է առաջնորդի հասցէին՝ վերջերս նրա արած մի շարք նկատողութիւնների առիթով։ Բենիկ վարդապետը թողնելով խաղաղ ժողովրդի մէջ իր խռովարար բնաւորութեան մի քանի հետքեր և գուշակելով իր ապագան՝ գնում է Կաթողիկոսին խնդրելու, որ իրան Բագու քարոզիչ կամ մի տեղ յաջորդ նշանակեն։ Բարով վայելեն։

**

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ վարժուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան մէջ երէկ, դեկտեմբերի 17-ին, կայացաւ անդամների խորհրդակցութիւն, որի նպատակն էր մշակել մի ծրագիր ռուս բանաստեղծ Նեկրասովի յիշատակը յարգելու համար նրա մահվան 25-ամեակի առիթով։

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի քաղաքային ուսումնարանական կոմիտէտը արձակել էր պաշտօնից արհեստաւորաց ուսումնարանի այժմեան կառավարիչ Օգանեզովին և նրա տեղ ընտրելով Բորժոմի արհեստաւորաց ուսումնարանի դիրեկտոր Պօբեդիմովին՝ Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարի միջոցով՝ առաջարկել էր Կովկասի ուսումնարանական հոգաբարձուի հաստատութեանը։ Երկուշաբթի, դեկտեմբերի 16-ին, հոգաբարձու Զավադսկի պատասխանեց Թիֆլիսի քաղաքագլխին, որ «Թիֆլիսի Միքայէլեան արհեստաւորաց ուսումնարանի կառավարիչը (դիրեկտորը) ինժենէր-տեխնոլոգ Օգանէզովն է և թէ նրանից չէ ստացված ոչ մի յայտարարութիւն այն մասին, որ նա ցանկութիւն չունի շարունակելու իր պաշտօնը ուսումնարանում», իսկ ինքը, հոգաբարձուն, այդ պաշտօնից նրան չէ հեռացրել, ուստի և անկարող է հաստատել Պօբեդիմովին Թիֆլիսի արհեստաւորաց ուսումնարանի դիրեկտոր։

—

Մեզ ուղարկված է Գրիգոր Արծրունու լուսամիտները։ Օգոստոս ամսից սկսվում է կանոնաւոր սեմեստեր (կիսամեակ)։

Մայիսի 22-ին ինքը Թագաւոր Կայսր Ալէքսանդր I այցելում է Դորպատ, որ իր ձեռի գործը անձամբ տեսնէ. դժուար է երևակայել, թէ ինչպիսի մեծահանդէս, չքեղ ու փառաւոր ընդունելութիւն է գտնում նա այստեղ։ Քաղաքի բնակիչները ոգևորված՝ ուրախութեան ու ցնծութեան աղաղակներով վազում են նրան դիմաւորելու, ուսանողները կազմում են պատուաւոր պահակախումբ, օրիորդները սպիտակ հանդերձներով ու ծաղիկների փունջերով, երեխաները նոյնպէս սպիտակ հագնված իրանց փոքրիկ զամբիւղներից սփռում են նրա ճանապարհի վրա կենդանի ծաղիկներ։

Նոյն տարվայ դեկտեմբեր ամսի 12-ին Դորպատի համալսարանի prorector Parrot չնորհ է ստանում կայսրին անձամբ ներկայանալու։ Կայսր Ալէքսանդր I ընդունում է Դորպատի համալսարանը իր հովանաւորութեան տակ, հաստատելով նրա իրաւունքներն ու ինքնավարութիւնը։ Այսպիսով դեկտեմբերի 12-ը կազմում է Դորպատի համալսարանի պատմութեան մէջ մի նոր շրջան, որով պաշտօնապէս սկսվում է համալսարանի գոյութիւնը։

Թէ ինչպիսի փայլուն դեր է խաղացել Դորպատի համալսարանը այս ամբողջ դարում, ինչպիսի հռչակ է ունեցել նա ոչ միայն Ռուսաստանում, այլ և արտասահմանում իր ճարտար, աշխարհահռչակ պրոֆեսորական ոյժերով, իր հարուստ գրադարանով, օբսերվատորիայով, կլինիկաներով, իր տուած գիտնականներով, իր կրթած 30,000-ից աւել ուսանողներով, այս ամենը շատ հետաքրքիր է ընդհանրապէս. բայց երբ ես թերթում էի Դորպատի համալսարանի Album academicum, ինձ աւելի հետաքրքրում էր, թէ արդեօք մեր հայերից քանիսներն են եղել այնտեղ։ Հարիւր տարվայ ընթացքում Դորպատի համալսարանը ունեցել է մօտաւորապէս 80 հայ ուսանողներ, մի թիւ, որ շատ աննշան տոկոս է կազմում. բայց չը նայած սրան, այս փոքրիկ խումբը հայ հասարակութեան ինչպիսի մեծ ոյժեր է պարգևել։ Արդէն 1835 թ. մենք գըտնում ենք Դորպատի համալսարանում առաջին հայ ուսանողին, մեր պատկառելի Ստեփանոս Նազարեանին (դոկտոր փիլիսոփայութեան)։ Աւելորդ եմ համարում կանգ առնել նրա անձնաւորութեան, նրա արած ծառայութեան, նրա պրոֆէսորական գործունէութեան, նրա բազմակողմանի գիտութեան վրա. վաղուց է հայ հասարակութիւնը նրան ճանաչել ու նրա յիշատակը մեծարել։ 20 տարի չանցած «alma mater»-ը տուել է հայ հասարակութեան մի ուրիշ պրոֆէսոր, Ֆ. Պատկանեանին (դոկտոր լեզուագիտութեան)։ Պատկանեանի հետ գտնում ենք պ. Սիմոնեանին, «Մեղու Հայաստանի» խմբագրին։ Դեռ հիմա էլ ցոյց են տալիս Իւրեվում, Ռիգայեան փողոցի վրա, մի փոքրիկ տուն, ուր Աբովեանն է ապրել։ Թէ արդեօք սա յաճախել է Դորպատի համալսարանը, մնում է դեռ հարց, համալսարանական դօկումենտներում չը կայ բանաստեղծ Աբովեան, իսկ կայ Վարդան Աբովեան, որը երկար ժամանակ էջմիածնի ճեմարանում ուսուցչի պաշտօն է վարել։ Հայ հասարակութիւնը ստացել է Դորպատի համալսարանից բժիշկների մի գեղեցիկ խումբ, որոնցից շատերը իրանց փորձառութեամբ ու հմտութեամբ գրաւել են հասարակութեան յարգանքը, ինչպէս օրինակ Բոտինեանց, Տիգրանեանց, Մայսուրեանց, Միրիմանեանց, Օհանջանեանց և ուրիշները։ Այս 80 ուսանողների մէջ կան իրաւաբաններ, երկու վանականներ, մի արքեպիսկոպոս, 3 լուտերական պաստօրներ, որոնցից երկուսը դեռ այժմ էլ գործում են, մէկը Օրենբուրգ քաղաքում, միւսը Շվէյցարիայում։ Դորպատում աւարտած հայերը գրեթէ ամենքը թողել են իրանց բարի գործունէութեան հետքեր։

Հայ հասարակութիւնը չէ կարող մոռանալ իր՝ Դորպատի համալսարանից ստացած օգուտները, նա մնում է մեզ հայերիս համար էլ «alma mater», նա սնուցել, մեծացրել է նաև մեր երիտասարդներին. մինչդեռ մենք հայերս ոչ մի բարեգործական հետք չենք թողել այս գիտութեան տաճարի պատմութեան մէջ։ Միւս համալսարաններում գտնում ենք մենք կովկասեան թոչակաւորների, իսկ այստեղ, ուր ոչ մի հայ ընտանիք չենք գտնում, որտեղ հայ ուսանողը իսկապէս օտար, անծանօթ ու բոլորովին հասարակութիւնից առանձնացած է, որտեղ նա օգնութեան դիմելու ոչ ոք չունի, հայ հասարակութիւնը չէ աշխատել մինչև հիմա իր կարողացածի չափ ապահովել գոնէ մէկ ուսանողի, նշանակելով նրան մի որ և է թոչակ։ Ես գիտեմ մի քանի դէպքեր, որ պատմելիս մարդու ամբողջ մարմնով սարսուռ է անցնում,—չաբաթներով միայն չոր հացով է կերակրվում ուսանողը, սենեակում միայն 6—8 աստիճան տաքութիւն, ուր ոչ թէ պարապվել, նստել անգամ անհնարին է, ցրտից դողում է, իսկ դուրս գնալ անկարելի է, այստեղ 25 աստիճան ցուրտ է։ Կարող է արդեօք հայ հասարակութիւնը մի այսպիսի ուսանողից պահանջել, որ նա առողջ լինի, աշխատասէր ու աջողութեամբ պարապվի, որ նա ապագայում հասարակութեան համար մի պիտանի անդամ դառնայ։

Զարմանալի է, թէ ինչու մեզանում զգացմունքը այսպէս դժուար է պատուաստվում։ Մինչդեռ գերմանացի ուսանողը, ամեն բոպէ փողի կարիք զգալիս, համարձակութեամբ դիմում է իր ֆիլիստէրներին (philister անուանում են համալսարանում աւարտածներին, որոնք մի որ և է կօրպօրացիայում անդամ են եղել) ու առանց որոշ տերմինի նրանցից օգնութիւններ է ստանում,—մեր դումաներում կլուբը սատկի քամիներից քանդվել է և դետնի հետ հաւասարվել։ Ցայտնի բան է. թոյլ կերպով ամրացրած սիւների վրա կանգնեցնել ահագին ծանրութիւն, ծածկել չինութիւնը դեռ պատերը չը չինած՝ կարող է մի ամենաթեթև քամու, հաւասարակշռութեան մի անենչան շեղման զոհ լինել։ Ո՞ւմից պէտք է պահանջել դրա վնասը—կլուբի 7—8 հազար ռուբլին։—ահա հարց։

Թեմական դպրոցի տեսուչ Բենիկ վարդապետը մի հրաժարական զեկուցագիր է ներկայացրել առաջնորդին ու ինքը մեկնել Թիֆլիս։ Հաստատում են, որ զեկուցագիրը չէ վերաբերում դպրոցի վարչութեան, այլ մի շարք հայհոյանք է առաջնորդի հասցէին՝ վերջերս նրա արած մի շարք նկատողութիւնների առիթով։ Բենիկ վարդապետը թողնելով խաղաղ ժողովրդի մէջ իր խռովարար բնաւորութեան մի քանի հետքեր և գուշակելով իր ապագան՝ գնում է Կաթողիկոսին խնդրելու, որ իրան Բագու քարոզիչ կամ մի տեղ յաջորդ նշանակեն։ Բարով վայելեն։

**

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ վարժուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան մէջ երէկ, դեկտեմբերի 17-ին, կայացաւ անդամների խորհրդակցութիւն, որի նպատակն էր մշակել մի ծրագիր ռուս բանաստեղծ Նեկրասովի յիշատակը յարգելու համար նրա մահվան 25-ամեակի առիթով։

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի քաղաքային ուսումնարանական կոմիտէտը արձակել էր պաշտօնից արհեստաւորաց ուսումնարանի այժմեան կառավարիչ Օգանեզովին և նրա տեղ ընտրելով Բորժոմի արհեստաւորաց ուսումնարանի դիրեկտոր Պօբեդիմովին՝ Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարի միջոցով՝ առաջարկել էր Կովկասի ուսումնարանական հոգաբարձուի հաստատութեանը։ Երկուշաբթի, դեկտեմբերի 16-ին, հոգաբարձու Զավադսկի պատասխանեց Թիֆլիսի քաղաքագլխին, որ «Թիֆլիսի Միքայէլեան արհեստաւորաց ուսումնարանի կառավարիչը (դիրեկտորը) ինժենէր-տեխնոլոգ Օգանէզովն է և թէ նրանից չէ ստացված ոչ մի յայտարարութիւն այն մասին, որ նա ցանկութիւն չունի շարունակելու իր պաշտօնը ուսումնարանում», իսկ ինքը, հոգաբարձուն, այդ պաշտօնից նրան չէ հեռացրել, ուստի և անկարող է հաստատել Պօբեդիմովին Թիֆլիսի արհեստաւորաց ուսումնարանի դիրեկտոր։

—

Մեզ ուղարկված է Գրիգոր Արծրունու լուսաբարձրագոյն կրթութիւն ստացածները, իբրև պերճախօս ձայնաւորներ, աշխատում են հաստատել, որ ուսանողներին օգնելը հասարակութեան մեծ վնաս է պատճառում, իբր թէ օգնութիւնը ուսանողներին փչացնում է, նրանց հասարակական պարագիտներ է դարձնում։ Եթէ ուսանողութիւնը արդէն համալսարանում կորցրած լինէր իր իդէալները, եթէ նա էլ իր աչքը չաղ, իւղալի պատառներին մնկած լինէր ու համալսարանը դիպլօմ ստանալու մի հիմնարկութիւն դարձրած, այն ժամանակ հեշտ կը լինէր այսպիսի պարոններին հասկանալ։ Մի ժամանակ նրանք էլ հասկանում էին, թէ ինչ ասել է ուսանող լինել, քանի որ իրանք էլ ուսանողներ էին, իսկ հիմա... ամեն ինչ մոռացվել է, հիմա կարելի է հասարակութեան անտարբերութիւնը, անհոգութիւնը պաշտպանել, նրա գլխի տակ աւելի փափուկ բարձեր դնել։

Մենք ուրախանում, ուրիշների մօտ պարծենում ենք, երբ հայերից մէկը գիտութեան, կամ գեղարուեստի, կամ ուրիշ ճիւղերում իր ընդունակութիւններով աչքի է ընկնում, հրոչակ է ստանում։ Բայց մթթէ բարոյական պարտականութիւնները միայն սրանով պիտի սահմանափակվեն, միթէ սա հասարակական պարտականութիւն չէ օգնել ու միջոց տալ աղքատ ուսանողներին, մթթէ չեն կարող նրանցից Նազարեաններ, Աբովեաններ, Պատկանեաններ դուրս գալ. մեզ վրա չէ՞ վերջինների յիշատակը մի որ և է բարեգործութեամբ անմահացնել այն համալսարանում, որը նրանց պատրաստել ու մեր մէջ է ուղարկել։

Ժամանակ է, որ մենք էլ արթնանանք այս լեթարգիական քնից...

Ուսանող Ս. Միրզայեանց

Իւրեվ (Դորպատ)

սանկարի նոր արտատպութիւնը, որ կատարել է Սարգիս Սողոմոնեան՝ Արծրունու մահվան տասնամեակի առիթով։ Գինը 25 կոպէկ է։

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ ներկայումս քննվում է ապօրինի զաւակների և որդեգրած երեխաների իրաւունքները գիւղական դասակարգի մէջ ճշդութեամբ որոշելու հարցը։ Մտադրութիւն կայ, ի միջի այլոց, իրաւունք տալ անորդի գիւղացիներին ընդունել և որդեգրել, առանց գիւղական համայնքի համաձայնութեան, 10 տարեկանից ոչ աւելի հասակաւոր երեխաներ և տալ նրանց իրանց բոլոր իրաւունքները, որոնց թւում նաև հողային իրաւունքները։ Որդեգրած երեխաները կարող են լինել թէ օրինաւոր և թէ ապօրինի զաւակներ։ Իսկ այն որդեգրած երեխաները, որոնք 10 տարեկանից աւելի են, հասարակութեան լիազօր անդամ են դառնում միայն այն դէպքում, եթէ գիւղական հասարակութիւնը տայ այդ բանին իր համաձայնութիւնը առանձին համախօսական վճռով։ Բացառութիւն այս կանոնից թոյլ կը տրվի այն ժամանակ, երբ գիւղական հասարակութեան անդամը ամուսնանում է իր որդեգրած հասակաւոր երեխաների մօր հետ։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մշակել է արդէն մանկավարժական մուզէումների մի նախագիծ տարրական ուսումնարանների համար։

—

Պետերբուրգի ռուսաց Գրական ֆոնդը առաջարկել է տօնել դեկտեմբերի 27-ին ռուս բանաստեղծ Նեկրասովի մահվան 25-ամեայ տարեդարձը հոգեհանգիստ կատարելով նրա յիշատակին Կազանսկի մայր-եկեղեցում և մի գրական եկոյթ կազմելով, որի ժամանակ կը կարդացվեն ճառեր և ոտանաւորներ ու կը կատարվի մի նուագ՝ յօրինված յատկապէս այդ տօնի համար։

—

Թիֆլիսի քաղաքային ուսումնարանական մասնաժողովը, համաձայն կովկասեան ուսումնարանական վարչութեան առաջարկութեան, քննելով տեղական լեզուների դասաւանդութեան հարցը Թիֆլիսի տարրական դպրոցներում, որոշեց միջնորդութիւն յարուցանել այն մասին, որ այդ առարկաների դասատուների ռոճիկները աւելացնվեն 5 ռուբլով տարեկան ամեն մի դասի համար և թոյլ տրվի տեղական լեզուները աւանդել ոչ միայն չորրորդ և հինգերորդ դասերին, ինչպէս լինում է այժմ, այլ և երրորդ դասերի ժամանակ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՑՈՒԷԼԱՅԻ ԽՆԴԻՐԸ

—

Քաղաքական աշխարհի ուշադրութիւնը գրաւված է այժմ Վենեցուէլայի խնդրով։ Ինչպէս յայտնի է, եւրոպական երկու մեծ պետութիւններ, Անգլիան և Գերմանիան, միանալով, ընդհանուր գործողութիւն սկսեցին ամերիկական այդ փոքրիկ հանրապետութեան դէմ։ Այդ յարձակողական գործողութեան միացաւ և Իտալիան, բայց Ֆրանսիան, որ նոյնպէս շահեր ունի Վենեցուէլայում, ձեռնպահ մնաց, յայտարարելով, որ իր հաշիները մտադիր է կարգադրել դիպլոմատիական ճանապարհով, իսկ Միացեալ-Նահանգները, թէև առաջուց խոստացել էին չեզոքութիւն պահպանել, բայց այժմ, հասարակական կարծիքի ճնշման տակ, սկսել են յուզվել։ Եթէ չը կայանայ համաձայնութիւն վէճը Հաագայի միջնորդ իրաւարար դերագոյն ատեանի միջոցով լուծելու, խնդիրը կարող է բարդ կերպարանք ստանալ։

Ինչի մէջ է կայանում վէճը և ինչպէս ծագեց նա։

Այս տարի Վենեցուէլայում ծագեց ապըստամբութիւն և քաղաքացիական պատերազմ։ Հարաւային Ամերիկայի այդ հանրապետութիւնը տարածութեամբ երկու անգամ աւելի է, քան Ֆրանսիան, բայց ունի միայն 2½ միլիոն բնակիչ։ Եւրոպական ազգերից գլխաւորապէս երեքը—Ֆրանսիացիները, անգլիացիները և գերմանացիները—ունեն այդ երկրում զանազան մտաւական շահեր, որովհետև երկաթուղիների, հեռագիրների, հեռախօսների վարչութիւնը գտնվում է այդ ազգութիւններին պատկանող վաճառականների և ձեռնարկողների ձեռքում, և մանաւանդ գերմանացիները մի կարևոր գաղթականութիւն են կազմում։ Քաղաքացիական պատերազմի ժամանակ Ֆրանսիական, անգլիական և գերմանական գաղթականութիւնները վնասներ կրեցին և կորուստներ ունեցան։ Ֆրանսիան, որ պահանջում էր 56 միլիոն ֆրանկ, առաջարկեց կազմել ֆրանկո-վենեցուէլեան մի յանձնաժողով այդ պահանջի քննութեան համար, սակայն Անգլիան և Գերմանիան իրանց ազգայիների կրած վնասների և կորուստների վճարման համար խիստ դիմումներ արին Վենեցուէլայի հանրապետութեան նախագահ Կաստրոյին և երբ գոհացումն չը ստացան, այդ երկու մեծ պետութիւնները, փոխանակ աշխատելու խաղաղ եղանակով լուծելու վէճը, միաբանեցին և ուլտիմատում ուղարկեցին Կաստրոյին։ Վերջինս, նախապատրաստական բանակցութիւնների ժամանակ, պատասխանել էր, թէ օտարազգիների պահանջների քննութիւնը պատկանում է Վենեցուէլեան դատարաններին, որոնց և պէտք է դիմեն պահանջատէրերը, և յայտնել էր, որ ինքը կը զբաղվի այդ հարցով քաղաքացիական պատերազմի դադարումից յետոյ։

Սակայն անգլիական և գերմանական կառավարութիւնները հարկ համարեցին միանալ և ընդհանուր պատերազմական կամ բռնի գործողութիւններ սկսել ամերիկական այդ հանրապետութեան դէմ։ Երկիւղ կրելով, որ Միացեալ-Նահանգները չը միջամտեն ի նպաստ Վենեցուէլայի, համաձայն Մոնրոէյի վարդապետութեան, նրանք կանխապէս դիմում են նախագահ Roզվէլթին և սա յայտնում է, թէ Միացեալ-Նահանգները ուղղակի չեն միջամտի վէճի մէջ, քանի որ Վենեցուէլայի անկախութիւնը վտանգի չի ենթարկվի»։

Ապահովելով իրանց այդ կողմից, բրիտանական և գերմանական երկու զրահաւոր նաւեր հրաման են ստանում մտնել Վենեցուէլայի ջրերը և Էդուարդ VII-ի ու Վիլհելմ II-ի ներկայացուցիչները յանձնում են նախագահ Կաստրոյին մի վերջին ուլտիմատում Կարակաս մայրաքաղաքում, և երբ, մի քանի օրից յետոյ, նախագահ Կաստրոն չէ զիջում, երկու դաշնակիցները գրաւում են Վենեցուէլայի նաւատորմիղը կազմող վեց նաւերը և ծովասոյզ անում։ Դրանից յետոյ, երբ Կաստրո դարձեալ չէ զիջում, դաշնակիցները սկսում են ռմբակոծել Կաբիլլո բերդը և պաշարել Վենեցուէլեան ծովափունքը։ Սակայն Միացեալ-Նահանգների կառավարութիւնը չտապում է յայտնել, որ նա չէ ճանաչում այդ պաշարումը և իրաւունք չը կայ արգելել առեւտուրը օտար նաւերին, քանի որ պաշտօնապէս պատերազմ չէ յայտարարված։ Նախագահ Կաստրոն չտապեց հրատարակել մի մանիֆեստ, ուժգնութեամբ բողոքելով ազգերի իրաւունքի այդ բռնաբարութեան և երկու պետութիւնների վարմունքի դէմ, որոնք չը կամեցան լուծել վէճը իրաւարարութեամբ ու դիպլոմատիական ճանապարհով և կոպիտ ոյժ ու բռնութիւն գործ դրեցին։ Միացեալ-Նահանգների ժողովուրդն ևս սկսեց յուզվել և կառավարութիւնը ստիպվեց այլ դիրք բռնել։ Ցուզմունքը աւելի սաստկացաւ, երբ Իտալիան ևս միացաւ Անգլիային և Գերմանիային, ապա մէկ մէկու ետեւից՝ Հոլլանդիան, Բելգիան, Սպանիան, Դանիան սկսեցին իրանց պահանջները յայտնել։

Սակայն բոլոր այդ սպառնալիքների առաջ Կաստրո նախագահը լուռ է մնում. նա լաւ գիտէ, որ դաշնակիցները սիրտ չեն անի երկրի խորքը մտնել, իսկ ինքը կարող է փոխադրել կառավարութիւնը ծովափնեայ մայրաքաղաքից շատ հեռու. վերջապէս, նա լաւ գիտէ, որ եթէ դաշնակիցները պատերազմի դիմեն, Միացեալ-Նահանգները չեն կարող անտարբեր մնալ։ Եւ այդ բոլոր պատճառները հարկադրեցին Անգլիային և Գերմանիային առաջարկել նախագահ Roզվէլթին միջնորդ դատաւոր հանդիսանալ ու վճռել վէճը, բայց նա մերժեց, առաջարկելով դիմել Հաագայի իրաւարար ատեանին։ Եթէ նախագահ Կաստրոն, տեղի տալով իր ժողովրդի զայրոյթին, որ պահանջում է կռիւ մղել յարձակվողների դէմ և պատրաստ է դադարեցնել դրա համար քաղաքացիական պատերազմը, չը համաձայնէ այդ առաջարկութեան, Անգլիայի և Գերմանիայի դրութիւնը բաւական պէտք է դառնայ։ Այդ պատճառով, լորդ Լանսդաունը, բրիտանական արտաքին գործերի մինիստրը, առաջարկեց գերմանական կառավարութեան, որ «երկու կառավարութիւններից ոչ մինը ազատութիւն չունենայ յետ կանգնել, նահանջել առանց միւսի համաձայնութեան»։

Ուրեմն երկու հզօր պետութիւնները պատրաստվում են միաբան գործողութեան։ Ցոյս կայ, սակայն, որ խնդիրը կարգադրվի և մարդկութիւնը մի նոր աղետալի պատերազմի հանդիսատես չը լինի։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Էրզրում, դեկտեմբերի 10-ին

Բաւական ժամանակէ ի վեր երկրաչարժի ցնցումներէն ազատ կը մնայինք, որով քիչ թէ շատ հանգիստ և միամիտ կը մնայինք, սակայն կը ցաւինք, որ այս հանգստութիւնս մեզ չը մնաց. ահա ամսոյս 8-ին, կիրակի, առաւօտեան ժամը 4-էն 10 րօպէ անցած զօրաւոր ցնցում մը տեղի ունեցաւ քաղաքիս մէջ, որ ժողովրդեան վրա խիստ երկիւղ ազդեց։ Նոյն պահուն, տակաւին առաւօտեան ժամերգութիւնն աւարտած չը լլալով՝ շատեր եկեղեցին կը գտնուէին. մինչ դպիրներն Առաքելոց կերգէին, մեծ խառնաշփոթութիւն մը ինկաւ բազմութեան մէջ. տըղոց աղաղակը, վայնասուններ, ոմանց դէպի դուրս փախչելը,—ամեն ինչ իրար խառնուեցաւ։ Վերջապէս քանի մը խոհուն մարդոց «բան չը կայ, բան չը կայ» որոտալովը քիչ մը հանդարտեցան։ Պատարագիչ քահանան, արիասիրտ գտնվելով՝ կեցած տեղէն չը շարժուեցաւ։ Նմանապէս դպրապետը և դպիրներէն շատերը կը մնային։ Անմիջապէս «Տէր-ողորմեա» սկսեցին, մնացած ժողովուրդը ծնրադրած և ջերմեռանդութեամբ ձայնակցելով անոնց՝ սրտառուչ աղօթեցին առ Աստուած, գիտնալով, որ այսպիսի որոգայթի մէջ անկէ զատ յոյս մը չունինք։

Նոյն օրը մինչեւ երեկոյ երկու անգամ թեթև ցնցումներ զգացուեցան, նմանապէս հետեւեալ օրը քանի մը անգամներ։ Ուրախ ենք, որ առ այժմ վնաս չունենք, բացի պատերու թափած կիրերը և հողերը. սակայն վախը ամենամեծ վնասը եղաւ. մանաւանդ գիշերները ամեն մարդ շատ կը վախնայ, ուստի իրարու հետ կանցնին։

Օր. Ե. Մ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պարիզի լրագիրները հաղորդում են, որ Պարիզում հիմնվում է մի լրագիր, որի նպատակը պէտք է լինի ճշդրիտ տեղեկութիւններ հաղորդել ռուսական կառավարութեան գործողութիւնների մասին, ի նկատի ունենալով, որ վերջերս շատ սխալ և թիւր տեղեկութիւններ են հաղորդվում։

—Դեկտեմբերի 11-ին (Ն. տ.) ինչպէս հաղորդում է «L'Européen» լրագիրը, տեղի ունեցաւ Վիէննայում մի կոնֆերենցիա, որին մասնակցեցին և բալկանեան ազգերի ներկայացուցիչները։ Կոնֆերենցիայի նպատակն էր քննել մի շարք առաջարկութիւններ՝ կազմակերպելու համար մասնաւոր մի այնպիսի արշաւանք, որ կարողանայ գրաւել Եւրոպայի ուշադրութիւնը այդ ազգերի համար։ Հետևեալ որոշումը հաղորդվել է Բերլինի դաշնագիրը ստորագրող եւրոպական մեծ պետութիւններին. «Զը նայելով եւրոպական մեծ դեսպանների արած դիմումներին օսմանեան կառավարութեան և ստացված խոստումներին բէֆորմների համար, բոլոր նրանք, որոնք ճանաչում են Արևելքի վիճակը, գիտեն որ այդ դիմումները և խոստումները նոյնչափ ապարդիւն կը լինեն, ինչպէս նախընթացները և ծանր հետևանքներ կարող են առաջ գալ։ Բերլինի դաշնագրի 18 և 61 յօդուածներում բոլոր այդ բէֆորմները, թէ եւրոպական և թէ ասիական Թիւրքիայում, որոշվել են։ Այդ բէֆորմներից ոչ մինը չէ գործադրվել. միւս կողմից՝ արիւնահեղ դէպքերը, որոնք տեղի են ունենում այսօր, ապացուցանում են, որ երկրի այժմեան վիճակը չափազանց վտանգաւոր է և Եւրոպայի խաղաղութեան և իրան Թիւրքիայի գոյութեան համար։ Վիէննայի կոնֆերենցիան հիմնվում է Բերլինի դաշնագրի վրա և հնարաւորը կանէ, որ այդ բէֆորմները իրագործվեն Բ. Դռան ձեռքով և սա երաշխաւորութիւն տայ նրանց իրագործման համար։ Օսմանեան կայսրութեան մէջ ապրող զանազան ազգերի և դաւանութիւնների իրաւունքների լիակատար հաւասարութիւնը կը պաշտպանէ մարդկութիւնը ու արդարութիւնը, կամրացնէ եւրոպական խաղաղութիւնը և Թիւրքիայի գոյութիւնը»։ Երկու օրից յետոյ, դեկտեմբերի 13-ին, կոմս Էօժէն Զիչի գումարեց մի նոր կոնֆերենցիա ունգարական պարլամենտի դահլիճում, Բուդա-Պէշտում։ Ներկայ էին, ի միջի այլոց, կոմս Այրերտ Ապպօնին, ունգարական պալատի նախագահը, բարոն Էրնստ Դանիէլ, կոմս Ալադար Կարաչօնի։ Կոմս Զիչին, բանալով նիստը, ասաց, որ մի արշաւանք կը կազմակերպվի ամբողջ Եւրոպայում այն գաղութիւնների դէմ, որոնք տեղի են ունենում տարիներից ի վեր Փոքր-Ասիայում և այժմ նաև Մակեդոնիայում։ Նա ներկայացրեց պ. Պ. Քիւռին, որ նկարագրեց Թիւրքիայում ապրող հայերի տխուր վիճակը. նա յայտնեց, որ միակ միջոցը՝ փրկել քրիստոնեայ ժողովուրդը՝ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածն իրագործելն է։ Կոմս Ապպօնին առաջարկեց կազմել ունգարական մի մասնաժողով, իբրև օժանդակ միջազգային յանձնաժողովին։ Որոշվեց երկրորդ օրը մի մեծ կոնֆերենցիա գումարել, բայց ունգարական կառավարութիւնը անյարմար համարեց թոյլատրել այն քաղաքական պատճառներով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 դեկտեմբերի

ՊԱՐԻԶ։ Այն գնացքը, որով բերվում էր Էմբէր ընտանիքը, հասաւ Պարիզ։ Էմբէրներին տարան բանտ։

ՍՕՖԻԱ։ Լամզդորֆ նախաձաչեց մինիստր-նախագահ Դանեվի մօտ։ Մակեդոնացիները ջանքնթացք կազմեցին ի պատիւ կոմսի։ Խմբագիր Նաումով ճառ արտասանեց տանջվող մակեդոնացիների կողմից, շնորհակալութիւն յայտնեց Թագաւոր Կայսրին՝ իրանց վիճակին կարեկցութիւն ցոյց տալու համար՝ և խնդրեց օգնութիւն։ Լամզդորֆ շնորհակալութիւն յայտնեց պալատի պատշգամբից։ Լամզդորֆ այցելեց Սոֆիայի միտրոպոլիտին և ներկայ եղաւ պատգամաւորների ժողովի նիստին, որ տեղի ունեցաւ փոքր դահլիճում։ Նախագահը խմեց նրա կենացը, իսկ կոմսը—Բուլգարիայի բարգաւաճման համար։ Երեկոյեան տեղի ունեցան ոգևորված ցոյցեր ի պատիւ Լամզդորֆի մակեդոնացի հազարաւոր ամբոխի կողմից։ Պալատում տեղի ունեցաւ ճաշկերոյթ։ Կոմսին ներկայացան մակեդոնացիները և ազգային ժողովի պատգամաւորները։ Ստացված են հեռագիրներ մակեդոնական ընկերութիւններից և գաղթականներից, որոնցով նրանք ողջունում են կոմսին և յոյս են յայտնում, որ երկրի դրութիւնը կը բարւոքվի։ Կոմսը այսօր մեկնում է Վիէննա։

ԼՕՆԴՕՆ։ «Standard» հաղորդում է, թէ Իւանչիկայ մի նախագիծ է կազմել, որին հաւանութիւն է տուել և կառավարութիւնը, հաղորդակցութեան ճանապարհների դէպարտամենտ հիմնելու եպիսկոպական դէպարտամենտի նման, որին և պէտք է յանձնվի գլխաւոր հսկողութիւնը Զինաստանի պօստերի վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-լէյտենանտ Ուսաչովի նշանակված է Անդրկասպեան երկրի կառավարիչ և Թուրքեստանի զօրքի երկրորդ կօրպուսի հրամանատար։

Թագաւոր Կայսրը բարևհաճեց ուղարկել կոնտես Սերաֆիմօ-Դիվիլեվսկի վանքին մի կանթեղ Աստուածամօր պատկերի հոմար, որի առաջ աղօթել և վախճանվել է հայր Սերաֆիմը։ Կանթեղը հանդիսաւոր կերպով կախված է. նա զարդարված է պետական զինադրօշով։

17 դեկտեմբերի

ՀՌՕՄ։ «Ստեֆանիի գործակալութիւնը» հաղորդում է, թէ Աւստրօ-Ունգարիան պաշտօնապէս հրաժարվեց առեւտրի և ծովագնացութեան դաշնագրից Իտալիայի հետ, որի ժամանակամիջոցը լրանում է 1903 թեւոյանի դեկտեմբերի 31-ին։ Աւստրօ-Ունգարիան պատճառաբանում է իր հրաժարումը նրանով, որ անճնար է պահպանել գինիներին վերաբերեալ յօդուածը։

ՊԱՐԻԶ. Եւ Էմբէր արձակված է բանտից։

ՏԱՆԺԷՐ։ Սուլթանի զօրքի կորուսաը ապըստամբների հետ ունեցած վերջին ընդհարման ժամանակ հասել է 2000 սպանվածի եւ վիրաւորվածի։

ՏԱՆԺԷՐ։ Լուրերին նայելով, սուլթանը, իր հետ առնելով թնդանօթներ և զինուորական պաշարեղէն, նահանջեց դէպի Ֆէց և փակվեց ամրացրած պալատում։

ՎԻԷՆՆԱ։ «Wiener Abendpost» հաղորդում է, թէ կայսրը ընդունեց էրցհերցոգ Լէօպոլդ Ֆերդինանդի հրաժարումը էրցհերցոգի կոչումից, իրաւունք տալով նրան անուանվել Լէօպոլդ Վէլֆլինդ և հրամայեց ջնջել էրցհերցոգի անունը «Ոսկէ գեղմի» և զօրքի ցուցակներից։

ԺԸՆԵՎ։ Այն մարդը, որ ռումբ էր ձգել Ս. Պետրոսի մայր եկեղեցու մէջ, ձերբակալված է. նա հոգեպէս հիւանդ մի իտալացի է, Մաեստրո ազգանունով. նա խոստովանեց իր արածը և յայտնեց, թէ գործակիցներ չէ ունեցել։

ՄԱԴՐԻԴ։ Տեղի ունեցաւ մինիստրների խորհուրդի նիստը Մարօկկոյի հարցի վերաբերմամբ։ Վճռված է դէպի Մալագա, Կադէկս և Սէգէլիրաս զօրքեր ուղարկել և, անհրաժեշտ դէպքում, օգնական զօրքեր ուղարկել նաև դէպի Ցէուտ և Մէլիլա։ Վճռված է մի շրջանաւ ուղարկել սպանցիներին պաշտպանելու համար։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԾԱՑՏՆՈՒՄ Է

—

ԲԱԳՈՒ, Ռ. Ալեանաքեան։ Ձեր պատասխանը չենք տպագրի։ Մեզ համար պարզ է, որ Թիւրիմացութիւններ կան ձեր վէճի մէջ։ Գ. Ս. Բ. արդէն յայտնեց, որ ինքը պ. Ֆէթվաճեանի ոգիները չէ անուանել „բալագանային", հետևաբար նրա յօդուածի մէջ եղած այս բառը չէ վերաբերվում պ. Ֆէթվաճեանի ցուցա-

հանդէպին։ Յետոյ, դուք պնդում էք թէ պ. Ս. Բ. անուանել է պ. Ֆէթվաճեանի մի քանի նկարները „ոչ լիմար“։ Բայց մենք կարդացինք պ. Ս. Բ-ի յօդուածը „Кастій“ լրագրում և այնտեղ այդպիսի բառ չը դըտանք։ Այնտեղ միայն ասված է պ. Ֆէթվաճեանի մի քանի նկարների մասին „не дурны“, բայց սա չէ նըշանակում „ոչ լիմար“, ինչպէս դուք էք թարգմանում, երևի առսերէնին անծանօթ լինելով, այլ պարզապէս այն միայն, որ այդ պատկերները „վատ չեն“։ Ճիշտ է, պ. Ս. Բ. իր յօդուածի վերջում դրած է ածել „աշակերտական խզբզանք“ խօսքերը, բայց արդեօք կարելի է ասել, թէ դրանք յատկապէս պ. Ֆէթվաճեանի նկարների մասին են ասված, քանի որ պարոնի յօդուածը երեք պատկերահանդէսի մասին է։ Մենք կարծում ենք, որ այստեղ էլ դուք Թիւրիմացութեան զոհ էք դարձել, քանի որ, յամենայն դէպս, չափազանցութիւն կը լինէր անուանել պ. Ֆէթվաճեանի պատկերները „աշակերտական խզբզանք“։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ԳԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՈՒԺԱՍԵՆԵԱԿ
ԴՈԿՏՈՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
մասնաւորապէս
ԲԳԻ, ԲՔԻ, ԱԿԱՆՋԻ ԵՒ ԿՐԾՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Сергіевская ул., д. 12.

Լոյս տեսաւ
ՇԱՀԲԻԱԲԻ
ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ
(Հրէասպանութիւն)
մեծ վէպ Պարսկաստանի կեանքից
(323 էջ. մանր տառերով)
ԳԻՆՆ Է ՄԷԿ ՐՈՒԲԼԻ
Դիմել Թիֆլիսում՝ Կենտրոնական և Գուտենբէրգ գրավաճառանոցներում, իսկ միւս քաղաքներից—«Մուրճի» խմբագրութեան։ Տան հատ գնողները վճարում են 9 ռուբլի։
5—10

ԲԺՇԿԱՊԵՏ
ԳՐ. ԻՎ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
նեարքին և երեխաների հիւանդութիւններից։ Ընդունում է առաւօտեան 10-ից մինչև 11-ը և 5-ից մինչև 7 ժամ երեկոյեան։ Միխայլովսկի պրոսպէկտ 154։ Տէլէֆոն 825։ 7—30

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
„ԱՐԱՔՍ“
ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՑՑՆԵՐ
1903 թ. Համար։

Պատի օրացոյցը իր մէջ պարունակում է Ե. հայերէն եւ ռուսերէն օրացոյցներ, հայերէն եւ ռուսերէն տառերով, իսկ ծոցինը ունի լիակատար եւ շատ հետաքրքիր յաւելուածներ։
Մի հատ պատի եւ մի հատ էլ ծոցի օրացոյց դիմողը կը ստանայ մի օրինակ «Ծոցի երգարան» անէջ։
Պատի օրացոյցն արժէ հատով 50 կոպէկ, դուժարով 35 կոպէկ։ Ծոցինը—հատով 20 կոպ., դուժարով 15 կոպէկ։
Դիմել՝ Александрополь, Эрив. губ. Типографія Саноянца и Степанянца. 14—20

Սուրբ Էջմիածնի Թիֆլիսում գտնված բոլոր կալուածները ի միասին, Սինօդի հրամանով,
ՊԷՏՔ Է ՏՐՎԻ ՎԱՐՁՈՎ
երկար ժամանակով. ուստի առաջարկում է ցանկացողներին իրանց գրաւոր պայմանները յայտնել Թիֆլիսի հայոց վիճակային կոնսիստորիային մինչև առաջիկայ յունվարի 15-ը 1903 թուին։ Պայմանների ծրագրի մասին կարող են տեղեկանալ կոնսիստորիայի դիւանատունը ամեն օր, 9-ից մինչև 2 ժամը առաւօտեան, բացի կիրակի և տօն օրերից։
Անդամ կոնսիստորիայի՝
3—3 Զաքարիա քահ. Զարդեղեանց

Լոյս տեսաւ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
IX-դ գիրքը
Բովանդակութիւն. Նոր-Նախիջեւանը և Նոր-Նախիջեւանցիք՝ Ե. Շահազիզի.—Հայկական սովորութիւններ՝ Քաջբերունու.—Սամսայ Ծռեր՝ Ս. Աբեղեանի.—Արայ Գեղեցիկ՝ Ե. Լալայեանի.—Հաւաքածոյ պօլսահայ ռամկական անգիր գրականութեան՝ Սճառեանի.—Բորչալուի գաւառ՝ Ե. Լալայեանի.—Պառաւաշունչ՝ Գ. քահ. Նժդեհեանի.—Գ. եպ. Սրուանձտեանց՝ Շերենցի.—Ս. արքեպ. Այտնեան՝ Ստ. Մալխասեանցի։
Գիրքը զարդարված է լուսատիպ պատկերներով։ IX և X գրքերի բաժանորդագինն է 3 ր.։ Իւրաքանչիւրը առանձին՝ 2 ր.։ Նախկին գրքերը վաճառվում են խմբագրատանը բաժանորդական գնով։
Դիմել՝ Ерванду Лалаянцу, Тифлисъ, Саперная, 5, կամ Семинарія Нерсисянъ.
2—4

ՆՈՒԽՈՒ երկու եկեղեցիները միասին՝ կարևորութիւն ունեն մի չնորհունակ խմբապետի մինչև 600 ր. ոռճկով. կարող ցանկացողներից խնդրւում է դիմել վիճակիս տէր-փոխանորդ Սիօն վարդապետին։
2—5

ՀԱՐԿԱՒՈՐ Է
մի հայ օրիորդ հայերէն կանոնաւոր խօսող մի երեխայի հետ խօսելու համար։ Պիտի գնայ Բագու։ Պայմանների համար դիմել Աւչարեան փողոց, տուն № 35 Բահաթրեանցի բնակարանը առաւօտեան ժամը 10-ից մինչև 5 ժամը երեկոյեան։
2—3

Լոյս տեսաւ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
ԼՈՒՍԱՏԻՊ ՊԱՏԿԵՐ
Իր մահվան տասնամեակի առիթով
Գինն է 25 կոպ.
Գումարով ցանկացողներին զիջումն կը լինի։
Դիմել՝ Тифлисъ, С. Согомонянцу, Троицкая, 11.
2—3

Որոնում եմ կապալառու
նոր չինված նօսերների համար։ Մանրամասնութիւնները հարցնել Վ-րօնինից։ Պեռկի, № 13, Բաղիերովի նոր դեղատան դիմաց։
5—10

Շաբաթ, դեկտեմբերի 28-ին
Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում
Տեղի կունենայ
ԴԵԿԱԴԵՆՏԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
ԿՕՆՏԻԼԻՕՆՈՎ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ
Դահլիճը զարդարված կը լինի գեղարուեստօրէն ելեկտրական խաղեր, չատրուաններ, շրջմոլիկ լոյսեր, կիսակներ և այլն, ղեկավարութեամբ ինժիներ-ելեկտրիկ Ա. Խիթարեանի և մեքենավար պ. Կապլանսկու։
Տիկիններից խնդրվում է լինել դեկադենտական շրջազգեստով կամ գոնէ դեկադենտական սանրուածքով, իսկ պարոնները լինելու են դեկադենտական փորկապով։ Հակառակ դէպքում թէ տիկինները և թէ պարոնները ենթարկվում են 50 կոպէկ տուգանքի։ Զգեստասենեակում տիկինների տրամադրութեան տակ կը լինի՝ պարիկմախեր պ. Վարդանեան և մի կարանող կին։
Սկիզբն է երեկոյեան 9½ ժամին։
Տոմսակի գինն է 2 ր. 50 կոպէկ, բարեգործական տուրքը միասին։ Տոմսակները վաղօրօք կարելի է գնել երեկոյթի կառավարչուհի իշխ. Մ. Թումանեանի մօտ (Барятинская № 8) և ընկերութեան գրասենեակում (Армянскій базаръ, домъ Кредитнаго Общества) մուտքը բակից։
(15, 18, 22, 25 և 28-ին) 2—5

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
Գ. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆԻ
ԴՈԿՏՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Քիմիական անալիզներ (որակական եւ քանակական) ամեն տեսակ նիւթերի՝ հանքեր, հանքային ջրեր, գիւղատնտեսական նիւթեր եւ այլն եւ այլն։
Տեխնիկական փորձեր եւ խորհուրդներ։
Դիմել՝ Тифлисъ, Кавказская Центральная Лабораторія Доктору химіи Г. Пастермаджіянъ, Вельяминовская ул., д. Лорисъ-Меликова, № 19.
12—24

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
„ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“
ազգային լիակատար երգարանի առաջին հատորը՝ հինգերորդ տպագրութեամբ, բարեփոխած թէ հին, գործածական և թէ նոր երգերով և բանաստեղծութիւններով, բաղկացած 382 մեծադիր երեսներից։ Գիրքը տպված է լաւ թղթի վրա, իսկ երեսը զարդարված է մի համապատասխանող նկարով։ Գինն է 1 ր. 20 կ., ճանապարհածախսով—1 ր. 40 կ., գումարով—1 ր., առանց ճանապարհածախսի։ Վերադիր վճարով (նալոժով) «Սոխակ»-ներ չեն ուղարկվում։ Ցանկացողները դիմում են Բագու, «Սոխակի» հրատարակչին, սոյն հասցէով. Протоіерею Григорію Григоріанцъ, БАКУ.
2—3

Հրատարակութիւն «Գուտենբէրգ» գրախանութի
Լոյս տեսաւ
ԼՈՐԴ ԼԻՏՏՈՆԻ
ՊՕՄՊԷՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ
(Պոմպէյը իր դարի քաղաքակրթութեան մանրանկարով)
Պատմական մի մեծ վէպ, բաղկացած 752 երեսից
Անգլիական բնագրից թարգմանեց Յ. ՄԻՐԶԱՑԵԱՆ
Գինն է 1 ր. 50 կ. Կաշեկազմով 1 ր. 80 կ.։ Փառակազմ 2 ր.
Պատրաստ է Սենկեվիչի «ԽԱՉԱԿԻՐՆԵՐ» վէպի թարգմանութիւնը և շուտով կը յանձնվի տպագրութեան։
4—5

Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. վաճառականներին, որոնք կը կամենային գործ ունենալ ՎԱՐՇԱՎԱՑԻ հետ, որ ես վաղուց արդէն վերաբնակված լինելով Վարշավայում, դանդն եմ առնում եւ կատարում եմ ամենայն տեսակ
ԱՄԵՐԻՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Եւ իմ բազմամեայ հմտութեամբ առեւտրական ասպարէզում օգտակար կարող եմ լինել ինձ դիմող վաճառականներին, որոնց խնդրում եմ դիմել ինձ հետեւեալ հասցէով.
ВАРШАВА, Медовая 17, кв. 33. Минасу Яргулову. (կ. հ.) 38—50

НИВА на 1903 годъ ДАЕТЪ СВОИМЪ ПОДПИСЧИКАМЪ БЕЗПЛАТНО

Подписчики „НИВЫ“ получатъ въ 1903 г.
52 №№ журнала „НИВА“. До 2000 столбцовъ текста и 1100 гравюръ, рисунковъ и художеств. снимковъ.
40 ТОМОВЪ „Сборника Нивы“ (каждый отъ 10—15 листовъ, въ общемъ около 9000 страницъ), содержащихъ въ себѣ:
16 ТОМОВЪ ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧ. АНТ. П. ЧЕХОВА и
24 ТОМА (остальные) ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧ. Н. С. ЛѢСКОВА.
12 КНИГЪ „Ежемѣсячныхъ литературныхъ и популярнонаучныхъ приложеній“, содержащихъ романы, повѣсти, разсказы, популярнонаучныя статьи, очерки современныхъ авторовъ и отдѣлы библіографіи, музыки, смѣси, шахматовъ и шашекъ, спорта, забавъ и разныхъ игръ.
12 №№ „Парижскихъ модъ“. До 200 столбцовъ текста и 300 модныхъ граюръ по фасонамъ лучшихъ мастеровъ.
12 №№ рисунковъ (около 300) для рукодѣльныхъ и выпильныхъ работъ и для выжиганія и до 300 чертежей выкроекъ въ натуральную величину.
1 СТѢННОЙ КАЛЕНДАРЬ НА 1903 г., отпечатанный въ 9 красокъ.

Новые подписчики на 1903 г. могутъ получать за весьма недорогую единовременную при подпискѣ доплату: безъ доставки 1 р. 50 к., съ дост. и перес. 2 р.—первые
12 ТОМОВЪ полнаго собранія соч. Лѣскова, приложенные при „Нивѣ“ за 1902 г.

При каждомъ № „Нивы“, независимо отъ другихъ приложеній, подписчики получатъ по одной книгѣ, а новые подписчики, выписывающіе также (за 1 р. 50 к., съ перес. 2 р.)—первые 12 томовъ соч. Лѣскова за 1902 г., получатъ ихъ при первомъ № „Нивы“ 1903 г.

Подписная цѣна „Нивы“ на годъ со всѣми приложеніями: БЕЗЪ ДОСТАВКИ въ СПБ. въ 6 р. 50 к. безъ доставки: 1) въ Москвѣ въ конт. Н. Печковской, Петровск. лин.—7 р. 25 к.; 2) въ Одессѣ въ кн. маг. „Образованіе“, Ришельевская, 12—7 р. 50 к.
СЪ ДОСТАВКОЮ въ СПБ. 7 р. 50 к.
Съ пересылкою во всѣ города и мѣстности Россіи . . . . . 8 р.
ЗА ГРАНИЦУ . . . . 12 р.
Разсрочка платежа въ 2, 3, и 4 срока.

Полное обраніе сочиненій въ 16 томахъ
АНТ. ЧЕХОВА
(Цѣна въ отдѣльной продажѣ 17 р. 50 к.)
которое будетъ отпечатано на хорошо-глазированной бумагѣ и будетъ выдано въ теченіе одного 1903 года, и
остальные 24 тома полнаго собранія сочиненій
Н. ЛѢСКОВА
(цѣна въ отдѣльной продажѣ 17 р.), значительно дополненныхъ новыми произведеніями, не вошедшими въ прежнія изданія, въ томъ числѣ: По поводу „Крейцеровой сонаты“, „Мелочи архіерейской жизни“, „Расточитель“ и пр.

ПОДПИСНАЯ ЦѢНА для новыхъ подписчиковъ, желающихъ получать и первые 12 томовъ соч. Лѣскова за 1902 г., состоитъ: безъ доставки 1) въ С.-Петербургѣ—8 р., 2) въ Москвѣ у Н. Печковской—9 р.; 3) въ Одессѣ въ кн. маг. „Образованіе“—9 р. 25 коп. Съ доставкою въ СПБ.—9 р. 50 к. Съ перес. во всѣ мѣста Россіи—10 руб, За границу—14 руб. Иллюстрированное объявленіе съ подробными условіями подписки высылается безплатно.

Требованіе адресовать въ Главную Контору журнала „НИВА“, С.Петербургъ, ул. Гоголя (бывш. М. Морская), № 22. 1—1

Дозволено Цензурою, Тифлисъ, 16 Декабря 1902 г. Электропечная Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.